

**ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԴԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՅԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՈՒԽ ***

ՀՏԴ 342.9

DOI: 10.52063/25792652-2023.1.16-65

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Եվրոպական համալսարանի
իրավագիտության և միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի իրավագիտության ամբիոնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
ghazaryanhayk@yahoo.com
ORCID: 0000-0003-0441-9696

Հոդվածի նպատակը անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությանն ուղղված խնդիրների վերհանումն է և դրանց լուծման ուղիների առաջարկությունների ներկայացումը, որը բխում է Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներից, որի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Մարդու իրավունքների և ազատությունների վարչաիրավական՝ արտադատական և դատական պաշտպանության խնդիրն առավել արդիական է հանրային հարաբերությունների լայնածավալ ոլորտում: Մարդու իրավունքներն առավել հաճախ խախտվում են գործադիր իշխանության մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից իրականացվող գործունեության ընթացքում:

Սույն հոդվածում մեր կողմից վեր են հանվել այն հնարքներն ու միջոցները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու, թե ներկայումս որ պաշտպանության միջոցն է ավելի արդյունավետ:

Հոդվածում քննարկվում են դատական և արտադատական կարգով վարչական ակտի բողոքարկման դերը և նշանակությունը անձի իրավունքների վարչաիրավական պաշտպանության բնագավառում, դրանց առանձնահատկությունները, վեր են հանվում գործող բացերը և առաջարկվում են լուծումներ մարդու իրավունքների պաշտպանության ապահովման և բարելավման համար, որոնք հանգում են նրան, որ մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը կոչված են ծառայելու մարդու խախտված իրավունքների վերականգնմանը և իրավունքների պաշտպանության ապահովմանը, իսկ այդ ձևերի իրականացման իրական երաշխիքներն են իրավունքների պաշտպանության վարչաիրավական միջոցները, որ կատարելագործման կարիք ունեն, և որոնց բացերին մենք անդրադարձ են կատարել՝ վերլուծելով նաև ներկայումս գործող պրակտիկան:

* Հոդվածը ներկայացվել է 13.02.2023թ., գրախոսվել՝ 08.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Հիմնաբառեր՝ դատական կարգով բողոքարկման վարույթ, վարչական ակտ, վարչական արդարադատություն, վարչաիրավական պաշտպանություն, դատական կարգ, վարչարարություն, մարդու իրավունքների պաշտպանություն, պետական մարմիններ:

Ներածություն

Հայրենական օրենսդրությունը ելակետ է ընդունում սահմանադրական այն հիմնադրույթը, ըստ որի՝ անձը դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունը պարտավոր չէ կախվածության մեջ դնել վարչական մարմին բողոք ներկայացնելիս: Արտասահմանյան երկրների փորձը ընթացել է այլ ուղղությամբ. որպես կանոն, դատարան դիմելու համար նախ անհրաժեշտ է բողոք ներկայացնել վարչական վերադաս մարմին:

Ընդ որում, բողոք ներկայացնելու այլընտրանքային տարբերակը սոսկ առաջին հայացքից է թվում առավել ժողովրդավարական, մինչդեռ վարչական կարգով բողոքարկման արդյունավետ ու երաշխավորված համակարգեր ներդնելու պարագայում իրավունքների վարչական կարգով պաշտպանության փոկ նախատեսելն առավել հուսալի է դարձնում իրավունքների պաշտպանությունն ընդհանրապես: Վերջին հաշվով, վերադաս մարմինը պետք է ստանձնի հստակ պատասխանատվություն ստորադաս մարմնի թույլ տված խախտման համար և չբավարարվի «դիտորդի» կարգավիճակով: *Մեր կարծիքով՝ վարչարարությունն առավել իրավաչափ կարող է համարվել, եթե այդ մարմիններում բողոքների քննարկման համար ձևավորվեն այնպիսի իրավասու կոլեգիալ մարմիններ, որոնց կազմում ներգրավված լինեն նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ: Ավելին, նպատակահարմար է, որ նրանք մեծամասնություն կազմեն:*

Մեր կարծիքով՝ ներկայումս նման կարգավորումներ չկան, և դրա վկայությունն է «Ճանապարհային ոստիկանության» կամ «Պարեկային ծառայության» կողմից կայացրած վարչական տույժ նշանակելու մասին որոշումները պարտադիր կերպով վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտի ներդրումը: Սակայն դա ներկայումս ստեղծել է «քառասյին» իրավիճակ, քանի որ վարչական մարմինը չունի այն ռեսուրսները, որը ունի դատարանը, և այնտեղ դեռևս գործում է նախկինում ձևավորված այն ավանդույթը, որ նույն մարմնի աշխատողները իրար նկատմամբ «լոյալ» են վերաբերվում և չեն վերացնում «կոլեգայի» գրված վարչական ակտերը: Այդ համակարգը կաշխատեք այն պարագայում, եթե վերադասության կարգով բողոքարկումները չկրեին ձևական բնույթ, և ձևավորվեք հատուկ կառույց (մարմին) հենց վարչական մարմնի ներսում, որոնք հաշվի կառնեն դատական պրակտիկայում առկա նախադեպային որոշումները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում կատարված փոփոխություններով, մասնավորապես՝ 287-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության՝ օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Որոշումը վարչական կարգով բողոքարկվում է վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում այլ իրավասու վարչական մարմին:

Վարչական ակտի բողոքարկման դերը և նշանակությունը անձի իրավունքների պաշտպանության բնագավառում, դրանց առանձնահատկությունները

Օբյեկտիվ լինելու համար նշենք, որ պետական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտումները պայմանավորված չեն միայն այն հանգամանքով, որ միշտ վարչական մարմինների կողմից են կատարվում այդ խախտումները: Զիչ չեն դեպքերը, երբ անհատն ակամայից ինքն է թույլ տալիս, որ խախտվեն իր իրավունքները՝ պայմանավորված իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակի աստիճանով: Հետևաբար, կարելի է ասել, որ մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտն իրական, գործուն և արդյունավետ մեխանիզմ կարող է ծառայել, մեր կարծիքով, այն պարագայում, երբ վարչական մարմիններում ստեղծվեն այնպիսի կառույցներ, որոնք հնարավորություն կտան քաղաքացուն չմտածել դատական պաշտպանության մասին, քանի որ վստահ կլինեն, որ իրենց վերաբերյալ կայացրած որոշումները կքննվեն բազմակողմանի և օբյեկտիվ ձևով, որը այսօր, կարծում ենք, խաթարված է, և այդ իրավունքից քաղաքացիները փաստացի զրկված են, քանի որ քաղաքացին, որը դիմել է վարչական մարմնի վերադասին՝ բողոքարկելու իր նկատմամբ կայացված որոշումը, մեծ հույսեր չունի, որը ապացուցվում է դատական հայցերի՝ օրեցօր աճող քանակով, իսկ վերադասության կարգով բողոքարկման ինստիտուտի ներդրման տրամաբանությունը դատարանի ծանրաբեռնվածությունը թողափելն էր¹:

Պետության և պետականության հանդեպ մարդկանց վերաբերմունքի ձևավորման գործընթացում վճռորոշ դեր ունի պետության իրավասու մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը: Յուրաքանչյուր մարդ անհամեմատ ավելի մեծ չափով ու շրջանակով է առնչվում վարչարարություն իրականացնող մարմինների, քան օրենսդիր կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինների ու դրանց պաշտոնյաների հետ, ինչն էլ ընդգծում է վարչարարության սոցիալական կարևոր նշանակությունը: Իսկ արդյունավետ և ժողովրդավարության սկզբունքներին համահունչ վարչարարության երաշխիքներից են՝ հիմնավորված վարչական օրենսդրության առկայությունը և վարչական իրավունքի համարժեք իմացությունը: (Դանիելյան 11)

Վերլուծելով մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտի ձևավորման և զարգացման ուղին խորհրդային ժամանակաշրջանում՝ կարող ենք եզրակացնել, որ թեև խորհրդային կառավարման գաղափարախոսության համար անընդունելի և խորթ էին «Վարչական արդարադատություն», «Վարչական դատավարություն», «Վարչական վարույթ» և «Վարչական հայց» հասկացությունները, այնուամենայնիվ գիտական մի շարք աշխատություններում և իրավական ակտերում արդեն իսկ առկա էին մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության տարրեր, որոնք հիմք հանդիսացան այդ ինստիտուտների զարգացման համար հետխորհրդային և անկախության տարիներին:

Նորանկախ Հայաստանի իրավաստեղծ գործունեության մեջ կարևոր դեր խաղաց «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդունումը (18.02.2004 թ.), որը հանդես է գալիս որպես ընդհանուր օրենսդրական ակտ ինստիտուտների կանոնակարգման տեսանկյունից: Այն իրավամբ կարելի է համարել վարչական վարույթի և վարչարարության միակ կողիֆիկացված

¹ Միայն 2022 թվականին վարչական դատարան ներկայացվել է 8000-ից ավելի գործ, որից 6000-ը բաժին է ընկնում այն գործերին, որոնց վերաբերյալ վերադաս մարմինը իրականացրել է վարույթ:

<http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=adminstrative>

օրենսդրական ակտը, որով առաջին անգամ համակարգված տեսքով իրենց ամրագրումն ստացան այդ ինստիտուտներին նվիրված իրավական նորմերը: (Դանիելյան 56-57)

Ժողովրդավարության զարգացման պայմաններում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը, օրենսդրության կողմից փկացումը և համակարգումը չափազանց կարևոր և առաջնային տեղ են զբաղեցնում պետական կառավարման մարմինների իրավագրային գործունեության սահմանման և հատկապես վարչական արդարադատության իրականացման վարույթային և դատավարական նորմերի ու կանոնների սահմանման գործում: Յուրաքանչյուր իրավական պետություն, պարտավորվելով պաշտպանել մարդու օրինական իրավունքներն ու ազատությունները, իրականացնում է իր ներքին գործառույթներից ամենակարևորներից մեկը՝ իրավական գործառույթը: (Վաղարշյան 104)

Սահմանադրությունը՝ որպես երկրի հիմնական օրենք, սահմանելով մարդու և պետության միջև հիմնարար հարաբերություններ և ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, միևնույն ժամանակ երաշխավորում է այդ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ժողովրդավար, իրավական ու սոցիալական պետության պահանջների համապատասխան պետական իշխանության մարմինների համակարգի միջոցով: Հետևաբար, Սահմանադրությունը հսկայական նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական կարգավորման համար, որտեղ որպես «հիմնաքար» հանդիսանում են առանցքային սահմանադրական հիմնադրույթները (սկզբունքները), որոնք ներկայացված են ՀՀ Սահմանադրության 1-17-րդ հոդվածներում և 20-րդ հոդվածում:

Պետություն-անհատ իրավահարաբերություններում պետությունը սկզբունքորեն ունի գերակա, գերիշխող դիրք իր կողմից իրականացվող հանրային իշխանության շնորհիվ, իսկ անհատն ակամայից ձեռք է բերում «հպատակի» կարգավիճակ, ինչը, իհարկե, հակասում է մարդու հիմնարար իրավունքներին և անխուսափելիորեն հանգեցնում իրավական պետության հիմքերի խարխումանը, եթե օրենսդրորեն չապահովվի որոշակի հավասարակշռություն:

Հանրային հարաբերությունների ոլորտում միշտ առկա է այն վտանգը, որ պետությունը վարչարարական պրակտիկայում կօգտագործի իր առավելությունը մասնավոր անձանց (քաղաքացիների, կազմակերպությունների և այլն) նկատմամբ և իր գերիշխող դիրքից ելնելով՝ չի կատարի իր գլխավոր պարտականություններից մեկը՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը:

Ի տարբերություն քաղաքացի-քաղաքացի հարաբերության՝ պետություն-քաղաքացի հարաբերությունը չի բնութագրվում մասնավոր սուբյեկտների հավասար ազատությամբ, մասնավոր ինքնավարությամբ, այն որոշվում և կարգավորվում է օրենքներով՝ սահմանադրության հիման վրա: Պետությունը, նրա օրգանները, վարչական մարմինները և պաշտոնատար անձինք «ազատություն» չունեն պետություն-քաղաքացի հարաբերության մեջ, այլ նրանց վրա իրենց առաջացման պահից ամբողջությամբ իշխում է օրենքը, որովհետև նրանք կաշկանդված են սահմանադրությամբ և օրենքով:

Պետական իշխանության մարմինների կամ վարչական մարմինների և քաղաքացու միջև հասարակական հարաբերությունների կարգավորումն օրենքներով ուժեղացնում է քաղաքացու իրավական դիրքը. օրենքի ուժով անհատի և պետական կառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց միջև պետք է ստեղծվի ձևական հավասար իրավական կարգավիճակ, և օրենսդրորեն պետք է երաշխավորվի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Այլ կերպ՝ «Վարչական վարույթի իրավունքի և նրա կողմից փկացիայի իմաստն ու նպատակը պետության և քաղաքացու միջև սկզբունքային և, հետևաբար, անխուսափելի ուժային տարբերության վերացման կամ առնվազն մեղմացման մեջ է, դրա համար հարկավոր է, որ վարչական մարմինների և քաղաքացիների միջև

շփումներում ու իրավահարաբերության մեջ իրագործվեն վարչական մարմինների գործելակերպի վերաբերյալ իրավական պետության հիմնարար սկզբունքները»: (Հարցեր և պատասխաններ 11)

Խորհրդային տարիներին վարչարարությունը և վարչական վարույթը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության արտադատական կամ վարչական ձև, այսինքն՝ անձի բողոքի կամ գանգատի իրավունքի իրացման իրավական կառուցակարգ, որպես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված վարչական մարմինների գործունեության կազմակերպահրավական ձև, գործել են, սակայն ներկայումս վարչարարությունը և վարչական վարույթը ձեռք են բերել որակապես ավելի բարձր մակարդակ, որը թելադրված կամ պայմանավորված է վարչարարության ոլորտում բազմաթիվ ինստիտուտների (օրինակ՝ սկզբունքները, վարչական մարմինների փոխօգնության ինստիտուտը, ներկայացուցչությունը, ինքնաբացարկը, վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը, դրամական պահանջները կատարելը, վարչական ծախսերը, վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը) առկայությամբ ու օրեսդրորեն ամրագրմամբ, որոնք մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք են և վարչարարությունը դարձնում են մարդու իրավունքների լավագույն և արդյունավետ պաշտպանության կազմակերպահրավական ձև:

ՀՀ-ում Եվրախորհրդի պետություններում առկա եվրոպական բարձրագույն չափորոշիչներին մոտեցման ճանապարհին Սահմանադրական արդարադատության ուժեղացման հետ մեկտեղ պետք է կառուցակարգային դարձնել վարչական արդարադատությունը, որոնց արդյունքը ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի և «Վարչական դատավարության օրենսգրքի» մշակումն է:

Սահմանադրության նոր փոփոխություններով 50-րդ հոդվածը հստակ ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք ունի: Ի լրումն դրա՝ 50-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանադրական կարգավորման մակարդակ է բարձրացնում մարդու՝ լսված լինելու հիմնարար իրավունքը՝ սահմանելով, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: (Պողոսյան 14-15)

Մարդու իրավունքների վարչահրավական պաշտպանության միջոցներն ամրագրված և արտացոլված են Օրենքի գրեթե բոլոր հոդվածներում և ուղղված են վարչական վարույթի և վարչարարության շրջանակներում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը: Վարչարարությունը և վարչական վարույթը պաշտպանության արդյունավետ միջոցների համալիր են, քանի որ հանրային հարաբերություններում, որտեղ որպես իրավահարաբերության սուբյեկտ մի կողմից հանդես է գալիս անհատը, իսկ մյուս կողմից՝ պետական (վարչական) մարմինը, մարդու հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ են առանձնահատուկ գործիքներ ու եղանակներ, և դրանց օրենսդրորեն ամրագրումն իրական իրավական երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանության ապահովման համար: Կարծում ենք, որ Օրենքն օժտված է յուրօրինակ «առաքելությամբ». բազմաբնույթ ու բազմաշերտ հանրային հարաբերությունների ոլորտում կանոնակարգում և սահմանում է վարչական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավական վարքագիծն օրենքով սահմանված իրենց գործունեությունն իրականացնելիս, գործունեություն, որի արդյունքն անձանց համար առաջացնում է փաստացի իրավական հետևանքներ:

Նշենք, որ արտասահմանյան օրենսդրությունը նման հնարավորությունն չի ընձեռում, մասնավորապես, օրինակ, «Վարչական վարույթի մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքով վարչական ակտը անձանց կողմից կարող է

բողոքարկվել նախնական վարչական կամ արտադատական, որից հետո դատական կարգով:

Քնահատելով բողոքարկման վարույթում ձևավորված իրավակիրառ պրակտիկան, որի շրջանակներում բողոքարկման ենթակա վարչական ակտում նշվում է միայն այն դրույթը, որ ակտը կարող է բողոքարկվել վերադատության կամ դատական կարգով, կարծում ենք, որ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման նպատակով պետք է *օրենսդրորեն ամրագրվեն մարդու իրավունքների պաշտպանության իրական երաշխիք հանդիսացող այլ դրույթներ Նույնպես, մասնավորապես՝ յուրաքանչյուր վարչական ակտում հարկ է նշել, թե արդյոք տվյալ իրավական ակտը կամ վարչարարությունը ենթակա է բողոքարկման, ինչ կարգով և այլն: Այս դիրքորոշման հիմքում այն տեսակետն ենք դրել, որ ընդունելի ենք համարում վարչական ակտի հատկանիշներ ունեցող առանձին իրավական անհատական ակտերի բողոքարկման համար իրավական հնարավորություն չնախատեսելը:*

Վերադատության կարգով բողոքարկման իրավական հնարավորության դեպքում նշել՝ 1) բողոքը քննող վարչական մարմնի անվանումը, 2) եթե վարչական ակտը ենթակա է բողոքարկման մի քանի վարչական մարմին, ապա դրանց անվանումները և դրանց պաշտոնատար անձանց տվյալները: Վարչական մարմինների անվանական և դրանց պաշտոնատար անձանց տվյալների նշումը նպատակահարմար է այն իմաստով, որ երբեմն, հատկապես ֆիզիկական անձանց համար, հասկանալի և պարզ չէ, թե կոնկրետ ուր կամ ում պետք է ներկայացվի բողոքը:

Ինչպես նշել ենք, իրավունքների չարաշահման հիմնախնդիրն այսօր արդիական է նաև հանրային իրավունքի ոլորտում, քանզի այն ցուցաբերում է տարաբնույթ դրսևորումներ. չարաշահումներ կարող են թույլ տրվել և՛ վարչական մարմնի (պաշտոնատար անձի), և՛ քաղաքացիների կողմից: ՀՀ օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ այդ երևույթին նպաստում են նաև իրավունքի իրացման անկատար իրավակարգավորումները: Այսպես, այն դեպքերում, երբ վարչական մարմինն օժտված է անհրաժեշտ տեղեկատվությամբ և գործիքակազմով սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու և բարենպաստ վարչական ակտ կայացնելու համար, օրենսդրորեն պետք է պարտավորված լինի այդ ակտը կայացնելու, իսկ քաղաքացին պետք է ազատված լինի այդ հարցով դիմումներ ներկայացնելու պարտականությունից, որն էլ հիմք կհանդիսանա վարչական վարույթ հարուցելու համար: Նման պարտավորության ուղղակի ամրագրման բացակայությունը հնարավորություն է ընձեռում վարչական մարմնին, չարաշահելով իր լիազորությունները, խուսափել մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն գործառույթի իրականացումից առանց որևէ իրավական հետևանքի (Դանիելյան 23):

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարծում ենք, որ մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության իրավական կարգավորման սահմանադրական հիմնադրույթները թեև ոչ անմիջականորեն, սակայն առանցքային նշանակություն ունեն վարչաիրավական օրենսդրության ստեղծման և կիրառման համար:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության վարչական արդարադատության իրավական կարգավորման գլխավոր դերակատու մարմին է ընկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին (05.12.2013 թ.), որը սահմանում է ՀՀ վարչական դատարանում, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի

իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը (ՀՀՎԴՕ 1-ին հոդ.), սակայն առաջնահերթ առանձնացնենք վարչական դատավարության սահմանադրական իրավական հիմքերը:

Ընդհանրացնելով այս ամբողջը՝ կարող ենք գալ այն եզրահանգման, որ յուրաքանչյուր իրավական ինստիտուտի կամ ճյուղի իրավական կարգավորումը պետք է առաջնահերթ համապատասխանի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներկայիս հայեցակարգին, իրավակիրառ պրակտիկայում չառաջացնի հակասություններ և տարընթերցումներ և, վերջապես, համապատասխանի հասարակության ժամանակակից իրավագիտակցությանը և զարգացվածության աստիճանին:

Յուրաքանչյուր իրավական պետության, նրա մարմինների կողմից իրականացվող բոլոր միջոցառումներն անմիջականորեն պետք է ուղղված լինեն մեկ և գլխավոր խնդրի իրականացմանը. այն է՝ մարդու իրավունքների պաշտպանությանը և այդ իրավունքների իրացման համար համապատասխան երաշխիքներ ապահովելուն, ինչը և արդարացնում է պետության՝ որպես հասարակության քաղաքական իշխանության գոյությունը: Ինչպես արդեն նշել ենք, մարդու իրավունքներն առավել հաճախ խախտվում են պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, ուստի մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է սահմանադրությամբ, օրենքներով ու եկթաօրենսդրական ակտերով, և այդ իրավունքները պետք է հաշվի առնվեն ոչ միայն պետական մարմինների և պաշտոնատար անձանց, այլև բոլոր հասարակական մարմինների կողմից իրենց ամբողջ գործունեության և գործառնությունների իրականացման ընթացքում: «Քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխիքները պետք է բնորոշել որպես սոցիալտեսական, քաղաքական, բարոյական, իրավաբանական, կազմակերպական նախադրյալների համակարգ, որը ստեղծում է իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրականացման հավասար հնարավորություններ»: (Ստեփանյան 148)

Մարդու իրավունքների դատական պաշտպանությունը ամենակարևոր ու թերևս ամենազիջվող երաշխիքն է ժողովրդավարական և իրավական պետության կայացման համար, որտեղ գործում են արդարադատության սկզբունքները: Ինչպես նշում է Տ. Դոբրովոլսկայան. «Եթե ցանկանում ենք իմանալ, թե ինչ ճանապարհով են զարգանում քրեական դատավարությունը կամ նրա առանձին նորմերը, ապա ամենից առաջ պետք է ուսումնասիրել և գիտականորեն հիմնավորել հիմնարար և ելակետային դրույթների զարգացման ուղղությունները և հեռանկարները»: Թեև սավածը վերաբերում է քրեական դատավարությանը, սակայն, մեր կարծիքով, նույնը կարելի է ասել նաև վարչական արդարադատության վերաբերյալ: (Добровольская 5)

Վարչական արդարադատությունը շատ կարևոր երաշխիք է անձի իրավական կարգավիճակի իրականացման համար, որն արտահայտվում է իրավունքի սուբյեկտների նշված կարգավիճակի իրավական պաշտպանությունը բնորոշող հետևյալ գծերում.

1) վարչական արդարադատությունը թույլ է տալիս ստուգել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից սահմանված լիազորությունների իրացման օրինականությունը,

2) այն հնարավորություն է տալիս գնահատել անձի իրավական երաշխիքների ուժեղացմանն ուղղված պաշտոնատար անձանց սահմանված պարտականությունների կատարման որակը,

3) վարչական արդարադատությունը հնարավորություն է տալիս գործնականում իրացնել պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվության նորմերն անձի իրավական կարգավիճակի ապահովման

նպատակով նշված մարմինների կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

Այսպիսով, մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության երաշխիք հանդիսացող իրավական յուրաքանչյուր սկզբունք ունի իր ուրույն դերը և կոչված է ապահովելու վարչական արդարադատության կայացումը:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը ներկայումս ձեռք է բերել առանցքային նշանակություն իրավաբանական գիտության հիմնախնդիրների համատեքստում: Ժամանակակից պետությունը, որպես բարձրագույն արժեք ճանաչելով մարդու իրավունքները, ստեղծում է այդ իրավունքների պաշտպանության իրավաբանական կառուցակարգերի և ընթացակարգերի համակարգ: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածում որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք ամրագրված է հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պետության պարտականությունը, ընդ որում՝ սույն հոդվածը ճանաչվել է «ողջունելի» Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում հսկայական է գործադիր իշխանության մարմինների խնդիրը, քանի որ հենց պետական մարմիններն են, որ ունեն առավելագույն հնարավորություններ ինչպես պաշտպանելու, այնպես էլ՝ խախտելու մարդու իրավունքները: 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է, որի գործառնություններում առանձնացվում է երկուսը՝ քաղաքականության սահմանում և պետական կառավարում: Սահմանադրական այս նորմից բխում է, որ գործադիր իշխանությանը մարմինը, գործելով իր իրավասության շրջանակներում, պարտավոր է ապահովել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ՀՀ Սահմանադրությամբ, սահմանադրական օրենքներով, օրենքներով և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական ակտերի պահանջներով սահմանված կարգով: «Քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման համար կարևոր նշանակություն ունի նրանց ընդունելությունը, որի նկատմամբ կառավարությունն իրականացնում է մշտական հսկողություն»:

Գործադիր իշխանության բնագավառում պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքները խախտվում են թե՛ դիտավորությամբ, թե՛ ոչ դիտավորությամբ: Առաջին դեպքում, երբ խախտվում են մարդու իրավունքները, պաշտոնատար անձինք, ընդունելով մարդու իրավունքները այս կամ այն կերպ խախտող վարչական ակտ, կատարելով անօրինական գործողություն կամ չկատարելով օրինական գործողություն, օգտվում են քաղաքացու իրավական գիտելիքների ցածր մակարդակից, քաղաքացու հանդուրժողական վերաբերմունքից, վստահությունից, որ քաղաքացին չի կարողանա պաշտպանել իր իրավունքները և նույնիսկ չի փորձի՝ համոզված լինելով, որ այն ավելի կվատթաքացնի իր վիճակը:

Երկրորդ դեպքում մարդու իրավունքները խախտվում են պաշտոնատար անձանց մասնագիտական ցածր մակարդակի, իրենց իրավունքների և պարտականությունների չիմացության պատճառով, նաև, ինչու ոչ, միտումնավոր կերպով՝ վստահ լինելով, որ իր որոշումները չեն բողոքարկվի, իսկ բողոքարկման դեպքում էլ իր նկատմամբ ոչ մի իրավական հետևանք չի հետևի: Պետական ծառայողների և պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված հասարակայնորեն ավելի նվազ վտանգավորություն ունեցող արարքների համար սահմանված են վարչական ներգործության միջոցներ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով բողոքարկել վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կամ դատական կարգով: Սակայն այստեղ խնդիրը հետևյալն է. շատ հաճախ

քաղաքացիները գերադասում են ինչ-որ կերպ համակերպվել ստեղծված իրադրության հետ, քանի որ վստահ են վերադասության կարգով բողոքարկման անհուսալիության և անարդյունավետության վրա, իսկ դատական կարգով բողոքարկման դիմում են միայն ծայրահեղ դեպքերում, երբ համակերպվելու որևէ եզրեր չկան: Սակայն սկսած 2016-2020 թվականներից՝ քաղաքացիների մոտ դատական պաշտպանության ակտիվությունն նկատվեց, քանի որ հասարակական կազմակերպությունների ակտիվ աշխատանքի արդյունքում քաղաքացիները կասկածացան, որ իրենց իրավունքների պաշտպանությունը այնքան էլ թանկ «հաճույք չէ» (անվճար է) և կարող են օգտվել դրանից, և այդ մեթոդը սկսեց տալ իր արդյունքները, սակայն պետությունը՝ նկատելով, որ քաղաքացիները ակտիվորեն պաշտպանում են իրենց իրավունքները և հասնում են արդյունքների, մշակեց մեթոդներ սահմանափակելու՝ քաղաքացիների դատական պաշտպանության իրավունքը: Մինչ 2020 թվականը վարչական մարմինների կողմից կայացված ակտերը քաղաքացիները դատական կարգով կարող էին բողոքարկել անվճար՝ չծախսելով միջոցներ, սակայն 2020 թվականին օրենսդիրը փոփոխություններ մտցրեց «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, որտեղ սահմանվեց, որ դատական պաշտպանության համար քաղաքացիները պետք է վճարեն պետական տուրք, որը մի շարք դեպքերում հասնում է բողոքարկվող վարչական ակտի կրկնապատիկին, որը ակնհայտորեն միտում ունի սահմանափակելու քաղաքացուն դատական պաշտպանությունը իրացնելու հարցում:

Մարդու իրավունքների պաշտպանության պետաիրավական մեխանիզմների համակարգում ահռելի բաժինը վստահված է *դատական իշխանությանը*: Դատական պաշտպանության ինստիտուտը մարդու իրավունքների պաշտպանության առավել քաղաքակիրթ, տարածված և արդյունավետ ձև է, քանի որ իրականացվում է հրապարակայնորեն, քաղաքացիների համար առավել նախընտրելի է, և, ամենակարևորը, դատարանի կողմից կայացված որոշումը պարտադիր է կատարման անհատի, պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից: Դատավարության յուրաքանչյուր տեսակ կոչված է իրականացնելու արդարադատությունն մարդու իրավունքների համակողմանի պաշտպանության ուղղությամբ, ինչը կարևոր երաշխիք է իրավական պետության կայացման և զարգացման համար: Այս համատեքստում վարչական դատավարության դերն անզնահատելի է, մասնավորապես՝

- վարչական արդարադատության իրականացումը սերտորեն և անհուսալիելիորեն կապված է գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության գործառույթների իրականացման հետ,
- մարդու իրավունքների դատական պաշտպանության համակարգը հանդես է գալիս որպես իշխանությունների հակակշռելիության երաշխիք,
- վարչական արդարադատությունը նպատակաուղղված է վարչական ակտերի՝ օրինականության չափանիշներով իրավական գնահատական տալու ինդիքի լուծմանը. քննարկելով այս կամ այն իրավական ակտի օրինականության հարցը՝ դատարանը ստուգում է այն ընդունող պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչաիրավական կարգավիճակը, ուսումնասիրում է դրանց կողմից իրավական ակտեր ընդունելու նորմատիվ հիմքերը, գնահատում է այդ հանգամանքների առնչությամբ կողմերի ներկայացրած փաստարկները, բերված ապացույցները և այլն,
- պետական մարմինների գործունեության նկատմամբ դատական վերահսկողությունը իրավունքների պաշտպանության կտրվածքով ոչ թե նպատակ է, այլ վերահսկողության առանձին միջոց:

Վերոգրյալի հաշվառմամբ նշենք, որ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում վարչական արդարադատության առանձնահատկությունն այն է, որ վերջինս փաստացի իրավահավասարություն է սահմանում քաղաքացու և պետական մարմնի կամ նրա պաշտոնատար անձանց միջև հարաբերություններում, վերականգնում է

արդարության գոյության ու հաղթանակի՝ պետության կողմից իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանված լինելու վերաբերյալ մարդկանց համոզվածությունը:

Այսպիսով, մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունն ընդգրկում է հանրային հարաբերությունների ողջ ոլորտը, այն իր առանձնահատուկ դերակատարումն ունի հանրային վարչարարություն իրականացնող բոլոր պետաիրավական մեխանիզմների գործունեության օրինականության և արդյունավետության ապահովման գործում՝ նպաստելով հասարակության բնականոն գործունեությանը, հետևաբար նաև ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության պատշաճ հիմքերի ստեղծմանը:

Վարչական, արտադատական պաշտպանության ինստիտուտի խնդիրներն են՝

- ոչ իշխանական սուբյեկտի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ (օբյեկտիվ, անվճար, օպերատիվ) մեխանիզմների ստեղծում՝ ծախսերի (տնտեսական, իրավական և այլն) կրճատմամբ,
- վարչական գործերի քննության ընթացքում հանրային իշխանության գործադիր մարմինների հեղինակության, մասնագիտական ընդունակությունների և օպերատիվ գործելու կարողության բարձրացում,
- վարչական դատարանների բեռնաթափում:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը թվարկածը՝ կարող ենք արձանագրել, որ մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը կոչված են ծառայելու մարդու խախտված իրավունքների վերականգնմանը և իրավունքների պաշտպանության ապահովմանը, իսկ այդ ձևերի իրականացման իրական երաշխիքներն են իրավունքների պաշտպանության վարչաիրավական միջոցները, որ կատարելագործման կարիք ունեն և այսօր փաստացի չեն գործում, և ամբողջ բեռը ընկնում է դատարանների վրա, և այդ բեռը թոթափելու համար պետությունը միջոցներ է ձեռք առնում, որոնք ոչ թե նպաստում են այդ հարցի կարգավորմանը, այլ հակառակ էֆեկտ են ունենում, խախտում են քաղաքացու դատարանի մատչելիության սկզբունքը: Որպես հիմնավորում՝ կարող ենք նշել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, որոնց հիման վրա քաղաքացին դատարան դիմելու համար, անկախ վարչական տույժի գումարի չափից, պետք է վճարի 4000-10000 դրամ պետական տուրք, որը շատ դեպքերում կազմում է տույժի մինչև 90 տոկոսը, և այդ պարագայում նախընտրելի է վճարել ակնհայտ անհիմն ակտը, քան դիմել դատարան, որը մատչելի չէ, և հետագայում կարող են էլ ավելի լուրջ խնդիրներ ծագել, քանի որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ քաղաքացիների նկատմամբ, բողոքարկելով ակտերը, դատական կարգով հարուցվում է կատարողական վարույթ, որի հետևանքով պետք է լուրջ միջոցներ և ժամանակ ծախսել կարգավորելու համար, իսկ վճարելու պարագայում նման հարցեր չեն ծագում:

Մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության արդյունավետության կարևորագույն նախադրյալն է վարչական մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված՝ իրենց լիազորությունների իրականացման շրջանակում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության նկատմամբ վերահսկողության առկայությունը, որն արդյունավետ կարող է լինել բացառապես քաղաքացիական հասարակության նկատելի ներգրավմամբ: Չուտ գերատեսչական կամ արտագերատեսչական տարաբնույթ վերահսկողության լծակները, այնուամենայնիվ, բավարար չափով արդյունավետ չեն, եթե չեն ուղեկցվում քաղաքացիական հասարակության ազդեցության գործոններով: Սույն հարցի համատեքստում առաջարկում ենք ստեղծել անկախության սկզբունքով գործող համակարգող հանձնաժողով՝ պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող մարմին, որը կիրականացնի մշտադիտարկումներ, կհայտնաբերի թերություններն ու

իրավախախտումները, կառաջարկի արդյունավետ լուծումներ, կիրականացնի խորհրդատվական ծառայություն անհատների համար և այլն: Ընդ որում, նշված համակարգը կարող է համապատասխանել արդի պահանջներին, եթե հընթացս համալիր լուծվեն նաև այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են անհարկի կրկնակի ստուգումները, վերահսկողության ոլորտում անընդունելի բյուրոկրատիան ու կոռուպցիոն ռիսկերը և այլն:

Պաշտպանության ձևի և միջոցի տարանջատման և հստակեցման պայմաններում կարելի է ավելի հստակ և թիրախային վերհանել այն բացերը, որոնք առկա են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում և բարելավման ուղիներ փնտրելիս ջանքեր գործադրել հնարավորինս դիպուկ:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերևում բերված փաստերը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

- Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտն իրական, գործուն և արդյունավետ մեխանիզմ կարող է ծառայել, մեր կարծիքով, այն պարագայում, երբ վարչական մարմիններում ստեղծվեն այնպիսի կառույցներ, որոնք հնարավորություն կտան քաղաքացուն չմտածել միայն դատական պաշտպանության մասին, քանի որ վստահ կլինեն, որ իրենց վերաբերյալ կայացրած որոշումները վերադաս մարմինները կքննեն բազմակողմանի և օբյեկտիվ ձևով:

- Յուրաքանչյուր իրավական ինստիտուտի կամ ճյուղի իրավական կարգավորումը պետք է առաջնահերթ համապատասխանի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ներկայիս հայեցակարգին, իրավակիրառ պրակտիկայում չառաջացնի հակասություններ և տարընթերցումներ և համապատասխանի հասարակության ժամանակակից իրավագիտակցությանը և զարգացվածության աստիճանին:

- Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտն իրականացնում է օրինականության ամրապնդում, հայտնաբերված թերությունների ու բացթողումների շտկման միջոցով գործող օրենսդրության բարելավում և հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարում կարևորագույն լծակ:

- Մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանությունը պաշտպանության ներպետական կամ ազգային մեխանիզմներից է, մեր կարծիքով, թերևս ամենակարևորը, քանի որ այն ընձեռում է բացառիկ հնարավորություն՝ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների ոլորտում, որը իրավական պետության գլխավոր հատկանիշներից մեկն է:

- Մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության համար կարելի է յուրաքանչյուր վարչական մարմնում ստեղծել մարմին, որի կազմում կլինեն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ, որոնք, օգտագործելով դատական պրակտիկան, կկարողանան ավելի արդյունավետ դարձնել վերադաս բողոքարկման ինստիտուտը, որը, ցավոք, այժմ գտնվում է շատ ցածր մակարդակի վրա:

- մարդու իրավունքների պաշտպանության վարչաիրավական ձևերը կոչված են ծառայելու մարդու խախտված իրավունքների վերականգնմանը և իրավունքների պաշտպանության ապահովմանը, իսկ այդ ձևերի իրականացման իրական երաշխիքներն են իրավունքների պաշտպանության վարչաիրավական միջոցները, որ կատարելագործման կարիք ունեն և այսօր փաստացի չեն գործում, և ամբողջ բեռը ընկնում է դատարանների վրա, և այդ բեռը թոթափելու համար պետությունը միջոցներ է ձեռք առնում, որոնք ոչ թե նպաստում են այդ հարցի կարգավորմանը, այլ

հակառակ էֆեկտ են ունենում, խախտում են քաղաքացու դատարանի մատչելիության սկզբունքը:

- Առաջարկում ենք ստեղծել անկախության սկզբունքով գործող համակարգող հանձնաժողով՝ պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ հանրային վերահսկողությունն իրականացնող մարմին, որը կիրականացնի մշտադիտարկումներ, կհայտնաբերի թերություններն ու իրավախախտումները, կառաջարկի արդյունավետ լուծումներ, կիրականացնի խորհրդատվական ծառայությունն անհատների համար և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Գագիկ, Վաղարշյան Արթուր. *Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ*. Երևան, 2010, 891:
2. Դանիելյան Գևորգ. *Վարչական վարույթ և դատավարություն (ուսումնական ձեռնարկ)*. Երևան, 2011, 56-57:
3. Դանիելյան Գևորգ. *Սահմանադրական իրավունքների իրացման իրավական մշակույթը*, «Բանբեր ԵՊՀ. Իրավագիտություն», Երևան, 2017 №2 (23), ysu.am, 01.11.18:
4. *Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք*: Ուսումնական ձեռնարկ: Ընդհանուր խմբագրությամբ՝ ի.գ.դ., պրոֆ. Գ.Դանիելյանի, Երևան, 2012, 11:
5. *Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ*, Հեղինակային կոլեկտիվ՝ Հ. Թովմասյան, Գ. Սուրադյան, Հ. Թորոսյան, Վ. Գրիգորյան, Վ. Պողոսյան, Երևան, 2015, 11:
6. Պողոսյան Վարդան. *Սահմանադրության նախագծի մեկնաբանություններ*. Երևան, 2015, 14-15:
7. Ստեփանյան Հասմիկ. *Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավահավասարության սահմանադրաիրավական հիմունքները*. Ուս. ձեռնարկ. Երևան, 2010, 148:
8. Վաղարշյան Արթուր. *Պետության և իրավունքի տեսություն-1 (դասախոսություններ)*. Երևան, 2010, 104:
9. Commission européenne pour la démocratie par le droit (Commission de Venise) Avis préliminaire *Sur les projets d'amendements aux chapitres 1 7 et 10 de la Constitution de la République d'Arménie* №757/2014, 10.09.2015 թ., www.venice.coe.int, 01.11.18 թ., ՀՀ Սահմանադրության վերաբերյալ տե՛ս նաև Commission européenne pour la démocratie par le droit (Commission de Venise) Deuxième avis préliminaire *Sur les projets d'amendements concernant an particulier les chapitres 8, 9, 11 à 16 de la Constitution* №757/2014, 11.09.2015թ., www.venice.coe.int, 01.11.18 թ.:
10. Добровольская Татьяна. *Принципы советского уголовного процесса*. Москва. 1971, 5.

WORKS CITED

1. Harutyunyan Gagik, Vagharshyan Artur. *Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yan meknabanut'yunner*, [Commentaries on the Constitution of the Republic of Armenia, Yerevan], 2010, 891. (In Armenian)
2. Danielyan Gevorg. *Varchakan varuyt' ev datavarut'yun*, (usumnakan d'er'nark), [Administrative Proceedings and Litigation, study guide, Yerevan], 2011, 56-57. (In Armenian)
3. Danielyan Gevorg. *Sahmanadrakan iravunqneri iracman iravakan mshakuyt'y'*, Banber EPH, Iravagitut'yun, [Legal Culture of Realization of Constitutional Rights, Articles YSU, Jurisprudence, Yerevan], 2017 №2(23), ysu.am, 01.11.18. (In Armenian)

4. *Hayastani Hanrapetut'yan varchakan iravunq*, Usumnakan d'er'nark, Y'ndhanur xmbagrut'yamb` IGD prof. G. Danielyani [*Administrative Law of the Republic of Armenia. Study manual. General editor: IGD Prof. G. Danielyan, Yerevan*], 2012, 11. (In Armenian)
5. *Harcer ev patasxanner Varchararut'yan himunqneri & varchakan varuyt'i masin HH o'renqi veraberyal*, Heghinakayin kolektiv` H. T'ovmasyan, G. Muradyan, H. T'orosyan, V. Grigoryan, V. Poghosyan [*Questions and Answers Regarding the Law of the Republic of Armenia "On Basics of Administration and Administrative Procedure"*, Author collective: H. Tovmasyan, G. Muradyan, H. Torosyan, V. Grigoryan, Yerevan], 2015, 11. (In Armenian)
6. Poghosyan Vardan. *Sahmanadrut'yan naxagc'i meknabanut'yunner*, [*Comments on the Draft Constitution, Yerevan*], 2015, 14-15. (In Armenian)
7. Stepanyan Hasmik. *Hayastani Hanrapetut'yan qaghaqacineri iravahavasaru'tyan sahmanadraitavakan himunqneri'*, usumnakan d'er'nark, [*Constitutional and Legal Bases of Equality of Citizens of the Republic of Armenia. Study manual, Yerevan*], 2010, 148. (In Armenian)
8. Vagharshyan Artur. *Petut'yan ev iravunqi tesut'yun-1 (dasaxosut'yunner)*, [*State and Law Theory-1 (lectures), Yerevan*], 2010, 104. (In Armenian)
9. Dobvol'skaya Tat'yana. *Printsipy sovet'skogo ugovnogo protsesssa*, [*Principles of the Soviet Criminal Process, Moscow*], 1971, 5. (In Russian)

**COMPARATIVE LEGAL ANALYSIS OF THE ROLE AND SIGNIFICANCE OF
APPEALS OF ADMINISTRATIVE ACT BY THE JUDICIAL-EXECUTIVE SYSTEM IN
THE CHARACTER OF ADMINISTRATIVE-LEGAL PROTECTION OF PERSONAL
RIGHTS**

HAYK GHAZARYAN

*European University of RA, Faculty of Law and International Relations,
Chair of Law, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to highlight the problems aimed at the effective protection of human rights and provide recommendations for their solution, which derives from the requirements of Article 18 of the Constitution, according to which "Everyone has the right to effective means of legal protection of his rights and freedoms before the courts, as well as other state bodies."

The issue of administrative-legal, extrajudicial and judicial protection of human rights and freedoms is most relevant in the wide-scale field of public relations. Human rights are most often violated during the activities carried out by the bodies of the executive power or their officials.

In this article, we have highlighted the mechanisms and measures that allow you to find out which means of protection is more effective at the moment. The article discusses the role and significance of judicial and extrajudicial administrative act appeals in the field of administrative and legal protection of personal rights, their features, highlights existing gaps and offers solutions for ensuring and improving the protection of human rights, which lead to the fact that the protection of human rights administrative and legal forms are meant to serve for the restoration of violated human rights and ensuring the protection of rights, and the real guarantees for the implementation of these forms are the administrative and legal measures for the protection of rights, which need to be improved and whose gaps we have addressed by analyzing also current practice.

Key concepts: *judicial appeal proceedings, administrative act, administrative justice, administrative legal protection, judicial order, administration, protection of human rights, state bodies.*

СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ РОЛИ И ЗНАЧЕНИЯ ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНОГО АКТА СУДЕБНО-ИСПОЛНИТЕЛЬНОЙ СИСТЕМОЙ В ХАРАКТЕРЕ АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ ЛИЧНЫХ ПРАВ

ԱԿ ԿԱԶԱՐՅԱՆ

*соискатель кафедры права
факультет права и международных отношений
Европейского университета РА,
г.Ереван, Республика Армения*

Цель статьи - осветить проблемы, направленные на эффективную защиту прав человека, и представить рекомендации по их решению, что вытекает из требований статьи 18 Конституции, согласно которой «Каждый имеет право на эффективные средства правовой защиты своих прав и свобод перед судом, а также других государственных органов».

Вопрос административно-правовой, внесудебной и судебной защиты прав и свобод человека наиболее актуален в широком поле общественных отношений. Права человека чаще всего нарушаются при деятельности органов исполнительной власти или их должностных лиц.

В данной статье мы выделили методы, позволяющие узнать, какие средства такой защиты более эффективны на данный момент. В статье рассматриваются роль и значение судебного и внесудебного обжалования административных актов в сфере административно-правовой защиты прав человека, их особенности, выделяются существующие пробелы и предлагаются решения по обеспечению и совершенствованию защиты прав человека, которые приводят к тому, что административно-правовые формы защиты прав человека должны служить восстановлению нарушенных прав человека и обеспечению защиты этих прав; реальными гарантиями реализации этих форм являются административно-правовые меры защиты прав, которые необходимо усовершенствовать, проанализировав также текущую практику.

Ключевые понятия: *судебное апелляция производство, административный акт, административная юстиция, административно-правовая защита, судебный порядок, администрация, защита прав человека, государственные органы.*